

ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2023 թ. փետրվարի 9-ի թիվ 6/10
որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան

ԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԹԵՄ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒ ԱՎԱՐՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) ՍԹԵՄ դպրոցում (այսուհետ՝ դպրոց) սովորողին առնչվող այն հարաբերությունները, որոնք պարունակում են առանձնահատկություններ ու կարգավորման բնույթով տարբերվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 01 հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման ու ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգից»:

2. 10-րդ դասարանի ավարտին աշակերտը կատարում է բնագիտության, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ), ճարտարագիտության, մաթեմատիկայի (այսուհետ՝ ԲՏՃՄ) ուղղությունների ծրագրերից առնվազն երկու առարկայի և/կամ ևս մեկ օտար լեզվի (ռուսերեն/չինարեն/ֆրանսերեն/գերմաներեն) ընտրություն՝ հաջորդող երկու տարում ուսանելու ու նախապատրաստվելու համար իր ընտրած ԲՏՃՄ ուղղության մասնագիտությամբ բուհի ընդունելությանը:

2. ՍՈՎՈՐՈՂԻ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴԱՍԱՐԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ, ԱՎԱՐՏՈՒՄՆ ՈՒ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի 10-րդ և 11-րդ դասարանների սովորողները փոխադրվում են հաջորդ դասարան փոխադրական քննությունների միջոցով, որոնք անցկացվում են գրավոր ու բանավոր՝ ըստ դպրոցի խորհրդի որոշման ու սահմանած ժամանակացույցի:

4. Քննական առաջադրանքները մշակվում են դպրոցի առարկայական մեթոդական միավորման կողմից:

5. Փոխադրական քննությունները գնահատվում են 100-միավորային համակարգով:

6. Սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան յուրաքանչյուր քննությունից 50 և ավելի միավոր գնահատվելու դեպքում: 1-49 միավորով գնահատված սովորողները դուրս են մնում դպրոցից:

7. 10-րդ դասարանի ավարտին սովորողները որպես փոխադրման քննություն հանձնում են երկու (համակցված) քննություն՝

1) «Հայոց լեզու» ու «Հայ գրականություն»,

2) «Հանրահաշիվ» ու «Երկրաչափություն»:

8. 11-րդ դասարանի ավարտին սովորողները որպես փոխադրման քննություն հանձնում են չորս քննություն՝

1) «Հայոց լեզու» ու «Հայ գրականություն»,

2) «Հանրահաշիվ» ու «Երկրաչափություն»,

3) «Խորացված ծրագրով առարկա-1»,

4) «Խորացված ծրագրով առարկա-2»:

9. 12-րդ դասարանի ավարտին ավարտին սովորողները որպես ավարտական քննություն հանձնում են չորս (համակցված) քննություն՝

1) «Անգլերեն»,

2) «Հանրահաշիվ» ու «Երկրաչափություն»,

3) «Խորացված ծրագրով առարկա-1»,

4) «Խորացված ծրագրով առարկա-2»:

10. Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ նշանակում են բանավոր կամ գրավոր քննության արդյունքների հիման վրա, որոնք անցկացնում են դասավանդող ուսուցիչներն ուսումնական պարապմունքների վերջին երկու շաբաթվա ընթացքում: Տարեկան գնահատման համար հաշվի են առնվում սովորողի կիսամյակային գնահատականները:

11. Փոխադրման ու ավարտական քննությունները կազմակերպվում և անցկացվում են քննական հանձնաժողովների կողմից:

12. «Ֆիզկուլտուրա», «Նախնական գինվորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ դպրոցն ավարտելու վրա:

13. 12-րդ դասարանում ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 և պետական ավարտական բոլոր քննություններից 8-20 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:

14. Եթե խորացված ծրագրով առարկաներից մեկը «Հանրահաշիվ» ու «Երկրաչափություն» առարկաների համակցված մոդուլն է, սովորողն իր ընտրությամբ կարող է ազատվել «Խորացված ծրագրով առարկա-2»-ի քննությունից:

15. Սովորողը 12-րդ դասարանի ավարտին ծրագրի ավարտական քննություններից կարող է չհանձնել այն առարկաների քննությունները, որոնք հանձնելու է բուհական ընդունելության շրջանակում:

16. «Հայոց լեզու ու գրականություն», «Հայրենագիտություն» ու «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառների առարկաները ամփոփվում են 12-րդ դասարանի 1-ին կիսամյակի ավարտին:

17. Յուրաքանչյուր տարի սովորողները կամ սովորողների խմբերը (խմբում մինչև 4 անդամ) գարնանային արձակուրդի շրջանում ներկայացնում են նախագծային/ հետազոտական աշխատանքներ, որոնք գնահատվում են հանձնաժողովի կողմից ու գրանցվում սովորողի առարկայական թղթապանակում որպես ձևավորող գնահատականի բաղադրիչ: